## 14. ՋՈՒԽՏ ՏԵԳՅԵՐԿԻՅՀՏԵՐ

Կէլնեն ճեռչ ինծն պստիկ էրկու տեգյերկիյհտեր: Իսոնքյ մեյմեկուց շատ կպատռեն ըսկուն որ կտոր կիսկե, սծբծբն էսա էր, որ պստիկ տեգյերկին շա՛տ խորոտ էր, խուռնի խրեղեն:

Օրմ ճեռչ տեգյերկին կասի. - Ես ինչխ անեմ, որ իսորուն կուրիսցուցեմ, իսոր ճամ-նմուշ կտրցուցեմ:

Կէրթծ գյեղի տղեյներաց մեկուն քյանիմ փծրծ կուտա, կասի. - Կնծ, տծշտից մե խատ սև օց պոնի, պե:

Տղեն կէրթծ տծշտ, սև օցմ կպոնի, կպիրի: Ճեռչ տեգյերկին կէլնի էտա օց կտապկի. կանի քյծբծբ, ըսկուն, որ պամ բծլու չանե: Օց կտնի մեչ պնակին, կտանի պստիյ տեգյերկնգան, կասի. - Դե՛, կե:

Խեղճ պստիյ տեգյերկինն էլ միամիտ ի, օց կուտի, կէլնի, կքյնի: Կես կիշեր կակխի, շատ ծարվցեր ի, ըսկուն որ ներս-տյուս կվծռվի, պապնձվեր ի, մնացե տյուռն էլ փակուկ ի վերեն, չկանա էլնի տյուս:

Պստիյ տեգյերկին կուգյծ վեր փենջծրին կկայնի, աստծու ճրամանով օց կսաղանա մեչ ուր փորին, ճծլ-ճեքյաթ կպատմի:

Պստիյ տեգյերկին, որ էլծծ չէլծծ կլսի օցու մոտեն, կլծլակթնի, կիսրոչ կկանչի, կասի.

> *- Կիսու՛ր, իմ կիսու՛ր,*
> *Պտիկմ ճրիկ,*
> *Կաթա վեր լեզվիս,*
> *Էրթա վեր սոտիս,*
> *Խռվանա խոցյիս,*
> *Սև օցն ի տապկած,*
> *Խորոտն ի կիրած:*

Կիսուր, որ էսա խծբրներ կլսի, պաղ-զղզղուն ճյուր կպիրի, պստիկ խարսին կխմցուցի:

Աստծու ճրամանով օց կնգծն փորեն տյուս կուգյծ, կէրթծ, կփծթյութվի ճեռչ տեգյերկնգյան վիզ, ինոր կմեռուցի: